

մը յղկել ու հաւասարցնել, ծակերն ալ կաւիճով գոցել :

Եւ մետաղները արծաթազօծելու համար՝ արծաթի մալակոն, այսինքն սնդիկով բաղադրած արծաթը կը գործածուի : Եւ մետաղին երեսը շփելու է սնդիկով, յետոյ մալակոնը կպցնելով՝ սնդիկը թռցնելու է . ետքն ալ արծաթազօծած մետաղը արծնելու ու մաքրելու է :

Պղնձէ բանուածքները խիստ աղէկ կ'արծաթազօծին աս կերպով : Արծաթը բորակային ժանտաջրի մէջ լուծէ, ու ան լուծածին մէջը ջուր խառնելով՝ պղինձը մէջը ձգէ, որով արծաթի փոշին պղնձին վրայ կը ժողվի ու կը կպչի :

Ոսկէզօծութեան ու արծաթազօծութեան մէջ սնդիկը կրակով թռցնելու ատեն՝ անկէ ելած գոլոշիքը շատ փնասակար են գործաւորին, ու գէշ հիւանդութիւններ ալ կրնան պատճառել . աս բանիս համար գործաւորը պէտք է կերպով մը պահպանէ ինքզինքը որ չփնասուի :

Եւր գիւտ մըն ալ ելաւ աս տարիներս մետաղները ոսկէզօծելու և արծաթազօծելու, որուն վրայ ուրիշ անգամ խօսելու առիթ կ'ունենանք :

Երազանդէններու և սոսի ծաղիկներու համար առաջգահան վերնիճ :

Եւ զՈՒԱՆ հիմա աս բանիս համար բւեկնի ոգիքի՝ մէջ լուծուած առաձգական խէժ՝ կը գործածեն . բայց աս նիւթը շատ անյարմարութիւններ ունէր, վասն զի ան մետաքսեղէններն որ ասով կը տոգորուէին՝ քիչ մը ատենէն ետքը բանի չէին դար, բւեկնի ոգիքին հոտն ալ միշտ վրանին կը մնար : Ուստի աւելի դիւրին ու աժան կերպ մը հնարեցին որ սոսինձը՝ քացախի մէջ լուծելով կը

գործածեն : Եւ արակ՝ մաքուր ու որչափ կարելի է անգոյն սոսինձը կ'առնեն, մանր ջարդելով քացախի մէջ կը ձգեն, ու խիստ քիչ ջերմութեամբ կը տաքցնեն . երբոր աս նիւթը կը պաղի, սովորականին պէս գործածէ՝ ուղած գոյնը մէջը խառնելով : Եւ վերնիճը չայլայլի, աժան կ'ըլլայ, ու շուտ կը չորնայ :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Օտնաճի :

ՕՒԱՆԳԱԿԻՆ գիւտը կ'երևնայ թէ խիստ հին է, որովհետեւ մարդիկ իրարու ձայն տալու համար հնարած են : Եւ այսինքն է թէ առջի բերան մարդիկ աս բանիս համար կոշնակ կը բանեցնէին, այսինքն փայտ կամ տախտակ մը կախած՝ որ մուրճով կը զարնէին . վերջը մետաղներուն ձայն հանող ըլլալը տեսնելով՝ ասոնք առին գործածեցին : Մանք կ'ըսեն թէ հին Եգիպտացիք հնարած են զանգակը, և անով իրենց Սիրիս կուռքին տանին ժողովուրդը կը ժողվէին . անոնցմէ ուրիշ ազգեր ալ առին կ'ըսեն : Եւ այց պզտի զանգակները, որ բոժոժ՝ ալ կ'ըսուին, ուրիշ բաներու համար ալ կը գործածուէին . ինչպէս Սովսէս մարգարէին ատենէն հրէից քահանայապետին հապուստին վարի ծայրը բոժոժներ կախուած էին : Եւ կէ զատ՝ ջինու երկիրը ուրիշ հին բաներու հետ զանգակ ալ գտնուած է, միայն թէ աւելի գլանաձև՝ քան թէ հիմակուանները :

Եւրոպայի մէջ կ'երևնայ թէ զանգակի գործածութիւնը միշտ կայ եղեր, բայց քիչ տեղ : Եւրպատմուի թէ երբոր Եգիպտոս թագաւորին զօրքը Եգիպտոսի քաղաքներէն մէկը պաշարեցին, քաղաքացիք իրենց ե-

1 Թիբեթի լուսն :

2 Գ. Gomme élastique.

3 Թոմսոն :

1 Չիլիք :